Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Մարտի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմի առաջնորդարանում ընդունեց այդ օրերին Նյու Յորքում պաշտոնական այցով գտնվող ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին: Առաջնորդարանի դահլիճում կայացած հանդիպմանը ներկա էին նաեւ Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը. ԼՂՀ Արտաքին գործոց նախարար Նաիրա Մելքումյանը. ՄԱԿ-ում Հ.Հ. մշտական եւ լիազոր դեսպան Մովսես Աբելյանը. Վաշինգտոնում ԼՂՀ ներկայացուցիչ Թեւան Պողոսյանը. հոգեշնորհ եւ արժանապատիվ հայրեր եւ պաշտոնական այլ անձինք: Սա Նորին Սրբության առաջին պաշտոնական հանդիպումն էր վիրահատությունից հետո:

Վեհափառ Հայրապետը ԼՂՀ նախագահի հետ

Վեհափառ Հոր ողջույնի խոսքն ընթերցեց Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը. ի պատասխան որի ԼՂՀ նախագահն ասաց. «Վեհափառ Տեր. Հայաստանի եւ Ղարաբաղի ղեկավարներն ու ժողովուրդը կարոտել են Ձեզ»: Այնուհետեւ պարոն Ղուկասյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց ԱՄՆ կատարած իր այցի նպատակներին:

Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն Ա. Ղուկասյանին ներկայացրեց ԱՄՆ-ի Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի ընդհանուր տնօրեն Սիմոն Եզնիկ Պալյանին: Պրն. Պալյանը. խոսելով երկրաշարժից անմիջապես հետո Հայաստանում եւ Ղարաբաղում իրականացրած ՀՕՖ-ի մարդասիրական գործունեության մասին. հայտնեց. որ ՀՕՖ-ի ղարաբաղյան գրասենյակը մտադիր է հանրապետությունում ընդարձակել իր մարդասիրական գործունեությունը:

Հանդիպման ավարտին ԼՂՀ նախագահն իր երախտիքի խոսքն ուղղեց ամերիկահայությանն ու Հայ Եկեղեցուն՝ ցուցաբերած օժանդակության համար: